ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

08 մայիսի 2026 թվականի թիվ 51-Ա

ք.Երևան

«ՌԱԴԻՈ ԱԼԻՔ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով 2026 թվականի ապրիլի 06-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 10 վարչական վարույթի նյութերը, *պարզեց*.

Հանձնաժողովը «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ նաև՝ Օրենք) իրեն վերապահված վերահսկողական գործառույթներն իրականացնելիս հայտնաբերել է Օրենքի պահանջի առերևույթ խախտման հատկանիշներ, այն է՝ «ՌԱԴԻՈ ԱԼԻՔ» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ Հեռարձակող) կողմից իր 2025 թվականի հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկությունը մինչև 2026 թվականի ապրիլի 01-ը Հանձնաժողով չներկայացնելը:

2026 թվականի մարտի 02-ին Հանձնաժողովը Հեռարձակողների և ցանցային օպերատորների ղեկավարներին է հասցեագրել թիվ Ե/04/04.1/166-26 գրությունը Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների կատարման անհրաժեշտության մասին:

Հեռարձակողը նշված գրության վերաբերյալ որևէ պատասխան չի ներկայացրել:

Հանձնաժողովը, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 2026 թվականի ապրիլի 06-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է թիվ 10 վարչական վարույթը և 2026 թվականի ապրիլի 07-ի թիվ Ե/04/04.1/250-26 գրությամբ ծանուցել է Հեռարձակողին՝ հայտնելով որ հարուցված վարչական վարույթի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումներն ու բացատրությունները:

Հեռարձակողը հարուցված վարչական վարույթի վերաբերյալ 28.04.2026թ. ներկայացրել է պարզաբանումներ և բացատրություններ, ըստ որոնց՝

«(...) 2025 թվականի ընթացքում «ՌԱԴԻՈ ԱԼԻՔ» ՍՊ ընկերությունը ռադիոհեռարձակման գործունեություն չի իրականացրել: Ինչ վերաբերում է ընկերության այլ գործունեությանը, ապա հայտնում ենք, որ հաշվետու ժամանակաշրջանում այլ գործունեությունից ստացված ընդհանուր հասույթը կազմել է 7 700 000 (յոթ միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից՝ հայտնում ենք, որ 2025 թ. ընթացքում ընկերության կողմից տեսալսողական մեդիածառայությունների մատուցման (ռադիոգործունեության) բացակայության պատճառով հասույթ չի ձևավորվել, ինչով էլ պայմանավորված է եղել հաշվետվություն չներկայացնելը:»:

Միաժամանակ խնդրել է, հաշվի առնելով վերոնշյալը, կարճել վարչական վարույթը:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Համաձայն Օրենքի 1-ին հոդվածի 4-րդ մասի՝ սույն օրենքը Հայաստանի Հանրապետությունում տարածվում է տեսալսողական մեդիածառայություն մատուցողների, օպերատորների, կարգավորող պետական մարմնի և հանրային տեսալսողական մեդիածառայություն մատուցողի գործունեության կառավարումն ապահովող և հսկողություն իրականացնող մարմնի վրա:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 23-րդ կետերի համաձայն՝

1) տեսալսողական մեդիածառայություն մատուցող (այսուհետ՝ Հեռարձակող, լսողական մեդիածառայություն մատուցող՝ Լսողական ծրագրեր հեռարձակող) Հայաստանի Հանրապետության հիմնադրած կազմակերպություն կամ կարգավորող պետական մարմնի հեղինակազորած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար:

23) հեղինակազորում՝ կարգավորող պետական մարմնի կողմից ֆիզիկական կամ իրավաբանական անձին Հեռարձակողի կարգավիճակ տրվող փաստաթղթի տրամադրում:

Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հեռարձակողները և օպերատորները պարտավոր են յուրաքանչյուր տարի մինչև ապրիլի 01-ը կարգավորող պետական մարմին ներկայացնել նախորդող տարվա հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկություն:

Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 2020 թվականի օգոստոսի 07-ից սկսած, յուրաքանչյուր տարի Հանձնաժողովը հեռարձակողներին պաշտոնապես տեղեկացնում է Օրենքի վերոնշյալ պահանջի կատարման մասին, չնայած նրան, որ ոչ Սահմանադրությամբ և ոչ էլ տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրությամբ Հանձնաժողովն օրենսդրական պարտավորություն չունի:

Հատկանշական է, որ Հեռարձակողը 2025 թվականի հունիսի 02-ից հանդիսանում է Հանձնաժողովի կողմից հեղինակազորված իրավաբանական անձ (հեղինակազորման վկայագրի սերիան, համարը՝ ՀՎ № 072, որոշման ամսաթիվը՝ 02.06.2025թ.):

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են վարչական վարույթի ընթացքում Հեռարձակողի կողմից ներկայացված բացատրությունները, որի արդյունքում հայտնի է դարձել, որ Հեռարձակողը 2025թ. ռադիոհեռարձակման գործունեություն չի իրականացրել, իսկ այլ գործունեությունից ստացված ընդհանուր հասույթը կազմել է 7 700 000 (յոթ միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ: Հեռարձակողը նաև նշել է որ Օրենքով պահանջվող տեղեկությունը չի ներկայացրել, քանի որ 2025 թվականի ընթացքում տեսալսողական մեդիածառայության մատուցման գործունեություն չի իրականացրել, ուստի և դրանից գոյացած հասույթ չի ունեցել:

Սակայն վերոնշյալ բացատրությունները բավարար հիմք չեն կարող հանդիսանալ Հանձնաժողովի կողմից Օրենքի դրույթներով սահմանված իրավախախտումը չարձանագրելու և Հեռարձակողի նկատմամբ վարչական պատասխանատվության միջոց չկիրառելու համար:

Այսպես, Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է հասույթի վերաբերյալ տեղեկություն ներկայացնելու պարտադիր պարտականություն՝ անկախ այն հանգամանքից թե ինչ տեսակի գործունեություն է իրականացնում, ինչպես նաև հասույթի առկայությունից: Հետևաբար նշված տեղեկությունը ներկայացնելը պարտադիր է նաև, եթե հասույթը կազմում է 0 (զրո) ՀՀ դրամ: Տվյալ դեպքում Հեռարձակողը այլ գործունեությունից 2025 թվականին ստացել է հասույթ, ուստի պարտավոր էր Օրենքով սահմանված ժամկետում Հաձնաժողով ներկայացնել պահանջվող տեղեկությունը:

Արձանագրում ենք նաև, որ Հեռարձակողը փաստացի ընդունել է փաստն առ այն, որ մինչև ապրիլի 01-ը կարգավորող պետական մարմին չի ներկայացրել նախորդող տարվա հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկությունը:

Հեռարձակողը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելն առաջացնում է իրավական հետևանքներ, և ի

թիվս այլնի, Հեռարձակողը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների կիրարկման ապահովման համար: Վերոգրյալը բավարար հիմք է հանդիսանում Հանձնաժողովի կողմից Օրենքի դրույթներով սահմանված իրավախախտումն արձանագրելու և Հեռարձակողի նկատմամբ վարչական պատասխանատվության միջոց կիրառելու համար:

Այսպես, հիմք ընդունելով Օրենքի դրույթները և ձեռք բերված փաստերը՝ Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքով Հեռարձակողների և օպերատորների համար պարտավորություն է սահմանված՝ յուրաքանչյուր տարի մինչև ապրիլի 01-ը Հանձնաժողով ներկայացնել նախորդող տարվա հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկությունը:

Տվյալ դեպքում «ՌԱԴԻՈ ԱԼԻՔ» ՍՊ ընկերությունը Օրենքով սահմանված ժամկետում Հանձնաժողով չի ներկայացրել 2025 թվականի հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկությունը՝ դրանով իսկ խախտելով Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը:

Հանձնաժողովը վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության և համադրման արդյունքում կրկին արձանագրում է, որ Օրենքով Հեռարձակողների և օպերատորների համար սահմանված է պարտավորություն, որը չի պահպանվել Հեռարձակողի կողմից, և վերոգրյալը հիմք է հանդիսանում Հանձնաժողովի կողմից Օրենքի դրույթով սահմանված իրավախախտումն արձանագրելու և պատասխանատվություն կիրառելու համար:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում.
2) տուգանք.
3) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության կասեցում.
4) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Օրենքի 57-րդ հոդվածի 28-րդ դդ (Օրենքի 28.04.2026թ. խմբագրությամբ՝ 57-րդ հոդվածի 38-րդ) մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմին նախորդող տարվա հասույթի գոյացման բացվածքի և չափի վերաբերյալ տեղեկություն չներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասը, 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը, 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և ղեկավարվելով Օրենքի 57-րդ հոդվածի 28-րդ (Օրենքի 28.04.2026թ. խմբագրությամբ՝ 57-րդ հոդվածի 38-րդ) մասով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ՌԱԴԻՈ ԱԼԻՔ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 28-րդ (Օրենքի 28.04.2026թ. խմբագրությամբ՝ 57-րդ հոդվածի 38-րդ) մասով սահմանված վարչական տույժը՝ տուգանելով սահմանված 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ՌԱԴԻՈ ԱԼԻՔ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

08 մայիսի 2026թ.
ք. Երևան